

Էջ. ՏԱՐԻ ԹԻՒ 01 (1401) ՇԱԲԱԹ, ՅՈՒՆՈՒԱՐ 24, 2009
VOLUME 29, NO. 01 (1401) SATURDAY, JANUARY 24, 2009



Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. ՀԱՅԱԿԵԱՆ Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104

ՆՈՐ ԴԱՐԱՇՐՋԱՆ ԲԱՑՈՒԵՑԱՒ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՐԱՆԳՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՐԱՔ ՕՊԱՍԱ ԵՐԴՈՒՄ ՏԱԼՈՎ ԴԱՐՁԱՒ ԱՄԵՐԻԿԱՅԻ 44-ՐԴ ՆԱԽԱԳԱՀՐ



Պարաք Օպամա երդում կատարելով դարձաւ Ամերիկայի Միացեալ Նախագներու 44-րդ նախագահը

Ցունուար 20-ին, Պարաք Օպամա երդում կատարելով դարձաւ Ամերիկայի Միացեալ Նախագներու 44-րդ նախագահը, սակայն, ան եղաւ առաջինը, որու արմատները կու զայ աբրիկեան ցամաքամաէն եւ ոչ թէ եւրոպայէն:

Իշխանութեան փոխանցումը՝

Հանրապետական ծորճ Պուշէն, Դեմոկրատ Օպամային, շատերու կարծիքով, նոր դարաշրջանը մը պիտի բանայ այս գերջզօր պետութեան համար, որ այս օրերուն կը դիմագրաւէ իր տնտեսական մեծագոյն տագնապներէն մէկը:

Պարաք Օպամա կոչուած է ոչ

միայն լուծելու, օրէ-օր աւելի խորացող այդ տագնապը, այլ նաեւ վերականգնելու երկրի միջազգացին հեղինակութիւնն ու յարաբերութիւնները, որ վերջին տարիներուն, այդ եւս ենթարկուեցաւ անկուժի, նախորդ վարչակարգի վարած միահեծան ու անհետատես քաղաքականութեան պատճառաւ:

Ընտրելով Պարաք Օպամային, Ամերիկայի ժողովուրդը կատարեց պատմական ու շրջադարձին փոփոխութիւն։ Այժմ համակուած լաւատեսութեամբ, կը սպասէ իր ակնկալիքներու իրականացման։

Միւս կողմէ, նոր նախագահը գիտակցելով իր ստանձնած պար-

ՀԱՅ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԽՈՐՉՈՒՐԴ ԿԸ ՇՆՈՐՉԱՒՈՐԵ ՆԱԽԱԳԱՅ ՊԱՐԱՔ ՕՊԱՍԱՆ

Ս.Դ.Հ.Կ. Հայ Ամերիկեան Խորչուրդը շնորհաւորական նամակ յուղ է նախագահ Պարաք Օպամային՝ որպէս Ամերիկայի 44-րդ նախագահ իր երդման արարողութեան առթիւ։

«Այսօր յիշարժան օր է Ամերիկայի պատմութեան մէջ եւ Ամերիկահայ համայնքը պատրաստ է համագործակցելու Զեր նոր վարչամեքենային հետ, մէր համայնքը յուզող հարցերու շուրջ։

«Մերակոյտէն ներս դուք միշտ եղաք կողմնակից Միացեալ Նախագներու եւ Հայաստանի միջեւ յարաբերութիւններու ամրապնդման։ Մենք վստահ ենք որ, այսուհետեւ եւս պիտի օժանդակէք Հայաստանի ապահովութեան եւ առաջին հերթին թուրքիոյ եւ Արաբէց-

ճանի կողմէ հաստատուած շրջափակումի վերացման եւ Լեռնացին Ղարաբաղի հարցի խաղաղ եւ արդար լուծման, մեկնելով Ամերիկայի դաւանած սկզբունքներէն՝ ժողովրդակարութեան եւ ազատինքության հիման վրայ։ Կը յուսանք նաև որ, աւելի մեծ ուշադրութիւն կը դարձնէք Հայաստանի մէջ ժողովրդակարութեան վերահաստատման ուղղութեամբ», յատկապէս ըստուած է նամակին մէջ։

Եղանակացներով բառած է, «Այս առթիւ կը յիշեցնենք, Հայկական թեղասպանութեան ճանաչման ուղղութեամբ Զեր խոստումը եւ կը յուսանք, առաջին առթիւ իսկ Ամերիկեան Գոնկրէսէն ներս կը վաւերացուի այս կապակցութեամբ ներկայացուած յասուկ բանաձեւը»։

ԼԻԲԱՆԱՆԱՐԱՅԵՐՈՒ ՌԵՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Յառաջիկայ Յունիս 7-ին տեղի պիտի ունենան Լիբանանի խորհրդարանական ընտրութիւնները։

Այն լիբանանահայերը, որոնի կ'ուզեն մասնակցի այդ ընտրութիւններուն, կրնան հեռանայնել Ս.Դ.Հ.Կ. Հնչակեան Կուսակցութեան գրասենեակը՝ 626-398-0506 բիւին եւ ստանալ յաւելեալ մանրամասնութիւններ։

Ս.Դ.Հ.Կ. Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմին

Տարածաշրջանացին այցով Հայաստան գտնուող Եւրոպայի Միութեան արտաքին յարաբերութիւններու եւ Եւրոպական հարեւանութեան քաղաքականութեան հարցերով յանձնակատար Պենիթա Ֆեռերո-Ռուալդնըր Երեւանի մէջ կայացած մամլոյ ասուլիսի ընթացքին յայտարարեց որ, Եւրոպական Միութեան առաջարկած նոր՝ Արեւելեան գործընկերութեան ծրագիրը համագործակցութեան լաւ առիթներ կը ներկայացնէ Հայաստանին, սակայն, այդ ծրագրին մաս կազմելու համար Երկիրը պէտք է «կըրկ-նապատկէ բարեփոխումներուն ուղղուած ջանքերը»։

«Ընելիք շատ կայ յատկապէս կառավարման որակի բարելաման առումով։ Կարեւոր է կոռուպցիայի դէմ պայքարը, արդարադա-

տականութեան ծանրութեան, երդման արարողութեան առթիւ արտասամած իր ճառին մէջ զգուշացուց։ «Երկրի դիմագրաւած մարտահրահները լուրջ եւ բազմաթիւ են։ Անոնք դիւրութեամբ պիտի չլուծուին, ոչ ալ կարճ ժամանակուայ ընթացքին, բայց լաւ իմացիր Ամերիկա։ Պիտի լուծուին»։

Արտաքին քաղաքականութեան հարցերով նոր նախագահը անգամ մը եւս հաստատեց, որ զօրքերը դուրս պիտի բերէ իրաբէն։ Ան միաժամանակ զգուշացուց բոլոր անոնց, որոնք պիտի փորձեն վնասել Ամերիկային։ «Մենք ներողութիւն պիտի չխնդրենք մեր ապղելակերպին համար եւ պիտի չտատանինք պանելութեան եւ անմեղներու սպանութեան, կ'ըսենք ձեզի։ Ճեր կամքքը աւելի զօրաւոր է եւ չի կրնար կոտրուիլ եւ չէք կրնար մէզմէ երկար դիմանալ ու մենք պարտութեան պիտի մատնենք ձեզ»։

Յատկանշական էր Օպամայի խօսքը ուղղուած իսլամական աշխարհին, երբ ան գործակցութեան ձեռք մեկնեց այդ երկիրներուն։ «Իսլամական աշխարհին պատմական աշխարհին, կ'ուգենք նոր ճամբայ բանալ դէպի առջեւ, հիմնուած փոխադարձ շահու յարգանքի վրայ»։

Պարաք Օպամայի եւ փոխնախագահ ձօ Պայտընի երդման հանդիսաւոր արարողութեան, հակառակ սաստիկ ցուրտ եղանակին ներկայ եղան մօտ երկու միլիոն ամերիկացիներ, որոնք ժամանակած էին երկրի բոլոր կողմերէն, ականատես ըլլալու պատմական իրադարձութեան։

Պարաք Օպամայի եւ փոխնախագահ ձօ Պայտընի երդման հանդիսաւոր արարողութեան, հակառակ սաստիկ ցուրտ եղանակին ներկայ եղան մօտ երկու միլիոն ամերիկացիներ, որոնք ժամանակած էին երկրի բոլոր կողմերէն, ականատես ըլլալու պատմական իրադարձութեան։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԸ ԹԵԼԱԴՐՈՒԻ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ՝ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԻՈՒԹԵԱՆ ՄՈՏԵՆԱԼՈՒ ՇԵՌԱՆԿԱՐՈՎ



Պեճիքա Թեռերո-Ռուալդը տութեան խնդիրը պէտք է լուծուի։ Պէտք է գործէ անկախ դատավարական համակարգ»,- ըստ Տիկ Ֆեռերո-Ռուալդնըր։

Պատասխանելով այն հարցին, թէ ի՞նչ ազդեցութիւն կրնայ բարեփոխումներուն ուղղուած ջանքերը»։

Պատասխանելով այն հարցին, թէ ի՞նչ ազդեցութիւն կրնայ բարեփոխումներուն ուղղուած ջանքերը»։

Տար. էջ 4

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ՎԱՐՈՒՅ Ե ՊԱՐՏՈՒԵԼ

Եւ այսպէս, ԵԽԽՎ ՄՌՆՀԱՍՏՈՐԻՒ-
ՔԻ յանձնաժողովի համազեկուցող-
ՆԵՐԻ այցն աւարտուեց: Դատելով
ամէն ինչից, իշխանութիւնների հա-
մար այցն անյաջող է ստացուել:

Այսինքն՝ Նրանք չեն կարողացել ինչպէս հարկն է խաբել համազեկուցողներին: Յայտնի չէ նոյնիսկ՝ փորձել են խաբել, թէ՞ ի սկզբանէ դատապարտուած են համարել բոլոր նման փորձերը եւ գերադասել են «չորով» շարադրել իրենց դիրքորոշումը: Այսպէս թէ այնպէս, ամէն ինչ պարզ կը դառնայ ընդամէնը տասը օր անց՝ ԵԽԽՎ յունուարեան նստաշրջանում: Եւ այնուամենայնիւ, այս այցը կարեւոր էր Նրանով, որ «կողմէերի» դիրքորոշումները վերջնականապէս յատակեցուեցին: Պարզ դարձաւ, որ Հայաստանի իշխանութիւնները համակերպուել են Եւրախորհրդի պատժամիջոցների անխուսափելիութեան մտքի հետ, ու թերեւս հենց դա էր պատճառը, որ այցի աւարտից ընդամէնը մի քանի ժամ անց ոստիկանութիւնն ու «կարմիր բերետաւորները» ցուցադրական ցինիզմով ցրեցին ընդդիմութեան ակտիւիտաների հերթական ակցիան:

Այս ալցը կարեւոր էր նաեւ
նրանով, որ իրավիճակի յատակեցու-
մից յետոյ իշխանութիւններն ար-
դին ձեւականութիւնների ետեւից
ընկնելու կարիք չունեն եւ կարող են
ազատորին ասել այն ամէնը, ինչ

մտածում են ստեղծուած իրավիճակի մասին: Սամուէլ Նիկոնեանն, օրինակ, մի ցնցող միտք յայտնեց: յայտարարեց, թէ «իշխանութիւնը պարտաւոր է լինել զիջող, բայց բոլորս եկէք հասկանանք մի բան՝ իշխանութիւնը չի կարող պարտուել»: Հասկացա՞ք: Յաղթողներ եւ պարտուղներ լինում են միայն պատերազմների ժամանակ, «քուչի կոփուներում», եւ ընդհանրապէս՝ բոլոր այն դէպքերում, երբ խօսքը մրցակիցների մասին է: Մրցակիցներ, ովքեր իրենց առջեւ տարբեր նպատակներ են դրել, եւ ամէն մէկը փորձում է դիմացինին յաղթել: Մինչեւ Եւրախորհուրդն ի սկզբանէ հարցին բոլորովին այլ տեսանկիւնից էր նայում: Այն է՝ Հայաստանում տեղի են ունեցել ողբերգական իրադարձութիւններ, դրանց մեղաւորներին պէտք է բացայացել եւ պատժել, եւ այդ հարցում Եւրախորհուրդն ու Հայաստանի իշխանութիւնները գործընկերներ են: Այսինքն՝ միասին նոյն գործը պիտի անեն: Ու հիմա յանկարծ պարզում է, որ ամբողջ այս ընթացքում իշխանութիւնների խնդիրը ոչ թէ դա է եղել, այլ Եւրախորհոգին «յաղթելը»: Կամ էլ խօսքը ոչ թէ Եւրախորհոգին, այլ սեփական ժողովրդին յաղթելու մասին է:

Հիմա «իշխանութիւնը չի կարող պարտուել» մտքին նայենք այլ տեսանկիւնից: Իսկ ո՞վ է ասել, որ

ԹՐԻՉ ԱՊՈՒՇԻ

ուել միայն ժողովուրդը: Այս, ժողովրդական երկներում նաեւ իշխանութիւնները չեն պարտում, որովհետեւ ժողովուրդն է ընտրում իշխանութիւններին, եւ այդ դէպքում առաջում է, որ իշխանութիւնների պարտութիւնը նաեւ ժողովրդի պարտութիւնն է: Բայց համաձայնուէք՝ աս «Տեր դէպքը չէ»: Ի՞նչ կապ ունի Սերժ Մարգարեանը պետութեան եւ ժողովրդի հետ: Նա վերջին հաշուով նախագահ է դարձել ոչ թէ ընտրութիւնների, այլ Մարտի 1-ի արդիւնքում, հետեւաբար՝ զուտ իրաւական տեսանկիւնից նա իշխանութիւն չէ:

Հաւ, ենթադրենք նոյնիսկ, թէ
իշխանութիւն է: Նշանակո՞ւմ է դա
արդեօք, որ նա «չի կարող պարտ-
ուել»: Բա էլ ինչի՞ համար է օրէնքը,
էլ ինչո՞ւ է Հայաստանը Սահմանադ-
րութիւն ընդունել, էլ ինչո՞ւ ենք
անդամագրուել Եւրախորհրդին, մի-
ջազգային պարտաւորութիւններ
ստանձնել եւ այլն: Դե եթէ այդպէս
է՝ եկէք միանգամից Քաջ Նազարի
լիազօրութիւններ տանք Սերժ
Սարգսեանին ու մի կողմ քաշուենք,
թող նա էլ հրամաններ արձակի, որ
«արեւը պիտի արեւելքից ծագի ու
արեւմուտքում մայր մտնի, ցերեկը
պիտի լոյս լինի, գիշերը մութ» եւ
այդպէս շարունակ:

իսկ ընդհանրապէս, «իշխանութիւնը չի կարող պարտուել» զառանցանքը յիշեցնում է այն յայտնի անեկդոտը, երբ ֆուտբոլային հանդիպման ընդմիջմանը մարզիչը մտնում է հանդերձարան ու դիմում ֆուտբոլիստներին. «զիսէ՞ք, ես մահաւաստ չեմ, բայց ամէն դէպքում՝ առաջին խաղակէսից յետոյ 13:0 հաշուով պարտուելը լաւ նշան չէ»։ Յաւօք, Հայաստանի իշխանութիւններն այսօր հենց այդ վիճակում են։
ԱՆԴՐԱՆԻԿ ՄԻՔԱՅԵԼԵԱՆ
«ԶՈՐԾՈՐԾ ԵՇԽԱԼՆ.ՈՒԹԵՒՆ»

ԵՆԹԱՐԻՔ ԱՊՈՒՏՃԻ ՌԵ

Միջազգային հանրութիւնը, փաստօրէն, 2009 թուականի Յունուարը դարձրեց Ղարաբաղեան բանակցութիւնների եւ քաղքանտարկեալների հարցի խաչմերուկ, քանի որ ԵԽՆՎ-ում Հայաստանի պատուիրակութեանը ձայնից զրկելու քննարկումները եւ Դավոսում Սարգսեան-Ալիեւ բանակցութիւնները նախատեսում է զուգահեռ անցկացնել: Իհարկէ, զավուեան հանդիպման հարցը վերջնականապէս կարծես թէ որոշուած չէ, բայց միջազգային հանրութեան ներկայացուցիչների մտքերի ընթացքը արդէն իսկ ժամանցիկ ակնարկներ է պարունակում: Իսկ սա կարող է նշանակել, որ ԵԽՆՎ-ում Հայաստանի պատուիրակութեանը ձայնի իրաւունքից զրկել-չզրկելու հետ կապուած վերջնական որոշումը ոչ թէ Պրեսկուտ-Կոլումբիէտի տիրահռչակ զոյգի, այլ ԵԱՀԿ ՄԽ համանախազահողների այցի արդիւնքում է կայացուելու: Թերեւս սա էր պատճառը, որ Պրեսկուտ-Կոլումբիէտի այցը կայծակնացին բնոյթունեցաւ, ըստ էութեան՝ ձեւական մի արարողութիւն: Համազեկուցողները, թերեւս, եկել իին իրենց հայաստաննեան սպոնսորներին զեկուցելու, որ ոչնչով օգնել չեն կարող, որովհետեւ հարցը գլուքալ բնոյթ է ստացել: Եւ Գալուստ Սահակեանի ակնարկը շատ թափանցիկ էր: Իր վերջին ասուլիսում նա յայտարարեց, որ Եւրոպան, իբր, ընդդիմութեան վրայ մեծ փողեր է դրել՝ Հայաստանում գումաւոր յեղափոխութիւն անելու համար, ու հիմա, ըստ Սահակեանի, քանի որ յեղափոխութիւնը կիսատ է մնացել, Եւրոպացիք փողերը վերադարձնելու խնդիր ունեն, դրա համար իրենց այսպէս են պահում: Նման նախադասութիւնը, իհարկէ, պատահական չի հնչում. Սահակեանը, փողի ակնարկ անելով, պարզաբանում է պահանջում Փետրուարի 19-ին, դրանից առաջ եւ յետոց Հայաստանում

ՄԱՍԻՄ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐԴԱԿ ԳԱԶԱՆՑԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
ԳԱԲՐԻԵԼ ՍՈԼՈՅԵԱՆ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹԵԱՆ
ՎԱԶԳԻ ԽՈՏԱՍԵԱՆ
ՅԱՐՈՒՅ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ
Քեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626) 797- 6863
E-Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>

MASSIS Weekly
Organ of the Armenian Social
Democratic Hunchakian Party of

Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly

Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, Canada \$60 (Second
Class), \$75.00 (Air Mail)
Overseas \$85.00 (2nd Class Mail)

Overseas \$85.00 (2nd Class Mail),
\$125.00 (Air Mail).

US funds & drawn on US banks.
Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104

Lntfr

ՀԱՄԱՁԵԿՈՒՑՈՂՆԵՐԸ ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆ ԵՆ
ԱՐՏԱՅԱՅՅԵԼ ԱՆԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՄԵԶ
ՊԱՀՈՒՈՂ ԱՆՇԱՍՑ ԿԱՊԱԿՑՈՒԹԵԱՄԲ

«Ամէն դէպքում իրենց մօտ
այդ մտահոգութիւնը կար», - «Ազա-
տութիւն» ռազիոկայանին ասաց
Մարտի 1-2-ի իրադարձութիւն-
ներն ուսումնամիրող խորհրդա-
րանական ժամանակաւոր յանձնա-
ժողովի ղեկավար Սամուչէլ Նիկո-
եանը, ով Յունուարի 15-ին Երեւա-
նում հանդիպում էր ունեցել ԵԽԽՎ-
ի Մոնիստորինգի յանձնաժողովի
համագեկուցողուներ Զոն Պրեսկոտի
եւ Ֆորդ Կոլուց բիկի հետ:

Դիտարկմանը, թէ քանի որ
գլխաւոր պահանջը եղել է հենց
այն, որ Եւրախորհուրդը չի կարող
հանդուրժել քաղբանտարկեալնե-
րի գոյութիւնը կառուցին անդա-
մակցող Հայաստանում, նաեւ՝ որ
այդ պահանջը զենքեւ չի կատար-
ուել, եւ հարցին, թէ կարելի է
ասել, որ Հայաստանը, ըստ Մոնի-
տորինգի յանձնաժողովի, որեւէ
առաջընթաց չի արձանագրել, Նի-
կոեանը արձագանքեց. - «Ես չեմ
ուզում առաջընթացի կամ յետըն-
թացի մասին խօսել: Ես կարծում
եմ, որ Երբ Մոնիտորինցի յանձնա-
ժողովի նիստը եղաւ, եւ նրանք
արդէն յատակ գնահատականներ

ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՍԳՈՅ ԵՐԹ ԴԵՊԻ ԲԱՔՈՒԻ ՀԱՅ ԶՈՐԵՐԻ ՅՈՒՆԱԿՈԹՈՂԸ

Յունուար 19-ին՝ 1990 թուա-
կանի Յունուարին Բաքվում տեղի
ունեցած հայկական ջարդերի 19-
րդ տարելիցից օրը, «Փախստական-
ները եւ միջազգային իրաւունքը»
ամսուանումը կրող քաղաքացիական
ցանցը սպոյ երթ էր կազմակերպել
դէպի Միծեռնակաբերդի յուշահա-
մալիրի տարածքում գտնուող՝ Բաք-
ուի հայ զոհերի յուշակոլողութ:

Միջոցառման մասնակիցներից՝ Լեռնային Ղարաբաղի նախկին արտգործնախարար Արման Մելիքեանը, «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում նշեց, որ երթը նաև նպատակ ունի փաստելու, «որ աղբեկանահայ փախստականները շարունակաբար պայքարելու են իրենց շահերի եւ իրաւունքների պաշտպանութեան համար»:

«Ես կարծում եմ, որ տարիները շարունակ Հայաստանի եւ Ղա-

սուեցին, ձեւակերպումներ՝ քաղ-
բանտարկեալ, կարծում էն նրանք
երբեք էլ չառաջնորդուեցին եւ
հենց այդ բանտարկեալների շահե-
րից, եւ մեր պետութեան շահե-
րից... Ներքաղաքական իրավիճա-
կը դրանից շատ աւելի սրուեց:
Որտեղ սրուում է ներքաղաքական
իրավիճակը, որտեղ կա անհան-
դուրժողականութեան մթնոլորտ,
որտեղ իւրաքանչիւրը փորձում է
լծակներով յաղթել միւսներին, այն-
տեղ լաւ աւարտի մասին խօսք չի
կարող լինել՝ եւ պետութեան հա-
մար, եւ կոնկրետ անձերի հա-
մար»:

«Իշխանութիւնը պարտաւորէ լինել զիջող, բայց բոլորս եկէք հասկանանք մի բան՝ իշխանութիւնը չի կարող պարտուել... Այն, որ ստիպողաբար նրանց պարտադրեն որեւէ քայլերի. լինի ներսից, լինի եւրոպացի խորհրդից: Դաշտ վտանգաւոր է», - եղրափակեցնա՝ յաւելելով. - «Կարելի էր այդ հարցերը լուծել շատ աւելի մեղմ, շատ աւելի հանգիստ մթնոլորտում՝ փոխադարձ ընդառաջ քայլերով»:

ՊԱՅՄԱՆԱԿԻՈՐՈՒԱԾՈՒԹԻՒՆ Է ԶԵՌՔ ԲԵՐՈՒԹԵԼ ՍԱՐԳԱԾԵԱՆ - ԱԼԻԵՖ ՀԵՐԹՎԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ



Տեսարան՝ Մինակի խումբի համանախազահներու եւ Սերժ Սարգսեանի միջեւ տեղի ունեցած հանդիպումէն

Հայաստանի նախագահի մամ-
լոց գրասենեակի հաղորդագրու-
թեան մէջ չի նշւում հանդիպման
վայրն ու օրը, սակածն, ինչպէս
«Ազատութիւն» ռադիոկայանին
ասել էր ամերիկացի համանախա-
գահ Մեթիւ Բրայզան, հանդիպու-
մը կայանալու է շուէցարական
Դափուում յաջորդ շաբաթ մեկ-
նարկող համաշխարհային տնտե-
սական համաժողովի շրջանակնե-
րում:

Աղբբեջանական լրատուամի-
ջոցների փոխանցմամբ, ոռուսաս-
տանցի համանախազահ Եռուրի
Մերզլյակովը դեռ երէկ երեկոյեան
Երեւան մեկնելուց առաջ Բաքուի
օդանաւակայանում յայտարարել էր,
թէ Աղբբեջանի նախազահի հետ
հանդիպման ժամանակ Եռուսախա-
գահները իլհամ Ալիեւից ստացել

Են Հայաստանի Նախագահ Սերժ Սարգսեանի հետ հանդիպելու համաձայնութիւն։

«Երբ լինենք Երեւանում, ակն-
կալում ենք ստանալ հայկական
կողմի համաձայնութիւնը», - նշել
էր ռուսաստանցի դիւանագիտը՝
շեշտելով, թէ հնարաւոր հանդիպ-
ման օրակարգում կը լինեն դարա-
բաղեան հակամարտութեան կար-
գաւորման բազային սկզբունքների
շուրջ քննարկումները. - «Եթէ
հանդիպումը կայանայ, այն նուիր-
ուած կը լինի այդ սկզբունքների

որոշ պարզաբանումներին»:
«Ազատութիւն» ուաղիկայա-
նի հարցին, թէ արդեօք սա իր
վերջին այցն է տարածաշրջան
ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանա-
խագահի կարգավիճակով, Մեթիւ
Բրայգան արձագանքեց. - «Մի
քանի ժամից կը կայանայ ընտր-
ուած նախագահ Բարսաք Օբամայի
երգմնակալութեան արարողու-
թիւնը, եւ Ամերիկան կ'ունենայ
նոր նախագահ, յետոյ՝ պետքար-
տուղար, ով եւ կը կազմի իր թիմը:
Բայց անկախ ամէն ինչից, ես
ներգրաւուած կը լինեմ այս տարա-
ծայրածանում»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԸ ԹԵՂԱԴՐՈՒԻ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ԲԱՐԵՓՈԽՆՈՒՄՆԵՐ

Ծարունակուածէց 1-Էւ

դարանական վեհաժողովէն ներս
Հայաստանին ձայնի իրաւունքէն
զրկելը Հայաստան - Եւրամիու-
թիւն յարաբերութիւններու վրաց,
Պենիթթա Ֆեռերօ-Ռւալդնըր, մաս-
նաւորապէս ըստաւ. - «Այդ շատ
զգացուն հարց է, սակայն մենք յուս
ունինք, որ իշխանութիւններն ու
ընդդիմութիւնը, այնուամենայնեւ,
կրնան այդ ինսդիրը հարթել»:

Ան տեղեկացուց, որ Եւրոպա-կան Միութիւնը շուտով մասնագէտներու խումբ պիտի ուղարկէ Հայաստան, որոնք «Արեւելեան գործընկերութեան» ծրագիրի շրջագիծէն ներս կը շրջին ՀՀ նախարարութիւնները, կ'աշխատին կառավարութեան հետ, խորհուրդներ կուտան տան տնտեսութեան, էներգետիկ անվտանգութեան, փոքր եւ միջին պիզնէսի զարգացման, էլեկտրաէներգիայի շուկայի եւ այլ ոլորտներու վերաբերեալ, եւ այդ

ուղղութեամբ համապատասխան աշ-
խատանքի պարագային իրենք
կ'ունենան ցանկալի արդիւնք:

Հաստ Տիկին ֆեռություն՝ Ուղարկ-
նըրի, «Արեւելիքան հարեւանու-
թեան» ծրագիրին մաս կազմելը
արդէն մէկ քայլ առաջ է դէպի
իւղարկություն Բարձրագույն առաջա-
պահ Տիկին Մայություն առաջ է դէպի

Եւրոպացի Միութիւն։
Այս տարուաց Մայիսի 7-ին
տեղի կ'ունենայ զագաթաժողով,
որուն կը մասնակցին նաև «Արե-
ւելեան գործընկերութեան» ծրա-
ռիոի անդամ է եւլունեա՝ Հասա-

զրբը ասկաս Յ սրբամբ Հայութ-
տան, Ատրպէջան, Վրաստան, Բե-
լառուս, Մոլդովա եւ Ռէքրանիա:
Հայաստանէն ծեկնելէ առաջ
Տիկին Ֆեռներօ- Ուալդնըր հանդի-
պուժ ունեցաւ նաեւ ընդդիմադր-
դութեան ղեկավարը, առաջին նա-
խագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի
հետ:

Հանդիպումի ընթացքին
քննարկուած է քաղաքական բան-
տարկեալներու եւ ժողովրդավա-
րութեան առնչուող հարցերը:

ԱԶԳԱՅԻՆ

ԵՐԿՐՈՒ ՏԱՐԻ ԱՆՑԱՒ

19 Յունուար 2007 - 19 Յունուար 2009:

Երկրու տարի առաջ սպաննուեցաւ Հրանդ Տինք:

Երկրու տարի առաջ ազգամոլթուրքեր, մեծով ու պատիկով, ծրագրեցին Հրանդի սպաննութիւնը եւ օր ցերեկով մահափորձը գործադրեցին, ճշշտ այնպէս, ինչպէս իրենց պաշտելի թալաթը, հանրապետական թուրքիոց շատ մը փողոցներն ու հրապարակները իր անունով կոչուած թալաթը, Հիմների յասուկ արտօնութեամբ աճիւնները Գերմանիային թուրքիա բերուած թալաթը, ծրագրած ու գործադրել տուած էր հայոց ջարդը՝ 20-րդ դարու առաջին ու անմոռանալի ցեղասպանութիւնը:

Երկրու տարուայ ընթացքին թուրքիոց մէջ Հրանդի մասին զանազան յօդուածներ գրուեցան: Հրանդ թուրքիոց մէջ եղաւ ամերիկացիներու Martin Luther King Jr.-ը:

Հրանդի մշտական բացակայութիւնը շատ աւելի արժէք ու ազդեցութիւն ունեցաւ, քան իր կիստանութեան խօսածները եւ գրածները ունեցած էին:

Հարիւր հազար, երկրու հարիւր հազար անձ «Բոլորս Հայ ենք», «Բոլորս Հրանդ ենք» վեր-տառութիւններ շալիած, Հրանդին յուղարկաւորութեան թափորին մամսակցեցաւ: Այդ թափորին ջախջախիչ մեծամանութիւնը ոչ-հայեր էին: Պոլար հայութիւնը, տարեցով-նորածինով, անկողնոյ ծառայողով-անդամալոյցով, 60-70 հազար կը հաշուէէ: Այս թափորը ոչ թէ հայու մը սպաննութեան առ ի պատասխան ցոյց տրուած զօրակցութիւն մըն էր, ոչ թէ Տինք ընտանիքին եւ հայ համայնքին ցաւը բաժնելու միասնականութիւն էր, այլ այս թափորը, կառավարութեան խօսքի ազտութիւնը կաշանդող քաղաքականութեան դէմ միասնաբար կատարուած ըողոքի ցոյց մըն էր:

Հրանդ սպաննուեցաւ, որովհետեւ երկրին թափու հարցերուն մասին մկաս խօսիլ, գրել: Արդարութիւն, խօսքի ազատութիւն, հայերու հետ երկխօսութիւն պահանջեց:

Հարիւր տարի առաջ ալ հայեր արդարութիւն կը պահանջէին, կեանքի ազատութիւն, խօսքի ազատութիւն, որպէս օսմանեան հպատակ օրէնքի առջեւ հաւասարութիւն կը պահանջէին:

Ստացան հաւասարութիւնը:

Այդ հաւասարութիւնը եղաւ հոյի մակերեսին հաւասարիլ: Հրանդին ալ նոյնը վիճակուեցաւ:



Դեկտեմբերն, մի քամիներ, թուրքիոց ժողովրդավարական դիմագիծ մը տալու համար, համացանցային կայքէջի մը վրայ հայերէն ներողութիւն ինտրեցին: 25-30 հազար հոգի ալ իրենց զօրավիք եղաւ: Ուրիշ խումբ մը հակարչաւ կազմակերպեց՝ «Թող հայերը թուրքերէն ներողութիւն ինտրեցին» ըսաւ: Աւելի քան 6 հարիւր հազար ստորագրութիւն հաւաքեցին:

Ո՞ւր գացին Հրանդին յուղարկաւորութեան թափորին հետեւող այդ հարիւր հազարները, երկրու հարիւր հազարները:

Ներողութիւն ինտրեցիններուն եւ իրենց զօրավիշներուն դէմ դատական հետապնդում մկասաւ:

Թուրքիոց խարուսիկ ժողովրդավարական դիմագիծ մը տալ ջանացող այդ 30 հազար հոգին, թուրքիոց խակական դիմագիծը չի ցոլացներ:

Թուրքիոց խակական դիմագիծ մը տալ ջանացող այդ 30 հազար հոգին, թուրքիոց խակական դիմագիծը չի ցոլացներ:

Հարիւր տարի առաջ ալ հայեր արդարութիւն կը պահանջէին, կեանքի ազատութիւն, խօսքի ազատութիւն, որպէս օսմանեան հպատակ օրէնքի առջեւ հաւասարութիւն կը պահանջէին:

Ստացան հաւասարութիւնը:

Այդ հաւասարութիւնը եղաւ հոյի մակերեսին հաւասարիլ: Հրանդին ալ նոյնը վիճակուեցաւ:

ԵՐԵՒԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ ԹԵՇ Է ԼԻՆԵԼՈՒ

Տարուակաւածէջ-էն

Խանական ռեսուրսը կարող է կիսուել:

Երեւանի ընտրովի քաղաքական ֆիզուր է դառնալու՝ օժտուած հակայական լիազորութիւններով: Երեւանում է կենտրոնացած ոչ միայն հանրապետութեան բնակչութեան մօտ կէսը, այլև քաղաքականապէս ակտիւր հատուածը:

ՈՒՃԱՐՈՒԹԻՒՆ

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկանար զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին հաճեցէք կապ պահել մեզի հետ:
G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104
Norserount@sbcglobal.net

Հայրենիքը մէրն է, սիրէ՛, կած հեռացի՛ր հոսկէ» գոռացողն է, այդպէս զրոյն է: Հրանդին սպաննութիւնը պատրաստողներուն ինքնութիւնը երկու տարիէ ի վեր չյայտնաբերող սեւ ուժնէն է: Բանակացին յեղափոխութեան արգելք ըլլալու համար բանակը քիւրտերու ջարդով զբաղ պահող զամփուածն է:

Կարգ մը վաստակաւոր դեսպաններ, որոնք քաջածանօթ են թուրքիոց արիւնուածնեան, եւ պատմաբաննուածնեան, եւ «պատմաբաննուածն»ի կոչում ստուցած շարք մը «փրօֆէսուրներ» թրքական հեռուատանեին կարցագրոցներուն կը մասնակցին ու Հայոց Եղասպանութիւնը կ'ուրանան:

Ահա՛, այս անձերը թուրքիոց իսկական դիմագծին ներկայացուցիչն են:

Ճշմարսութիւնները իսկակայութեանը մարդկի իրենց այս վաստակութեամբ չեն կրնար ճերպատուիլ:

Մի քանի տարի առաջ, հայկական ջարդերու կապակցութեամբ թալաթի նօթազրութիւնները թերթի մը մէջ հարապարակուեցան, վերջերս ալ՝ զրքի ճեւով: Ըստ այդ, ջարդէն առաջ թուրքիոց մէջ ապրող հայերու պաշտօնական թիւը 1,256,403 է, որոնցմէ 63,967-ը կը պատկանի հայ կաթողիկէ համայնքին: Թալաթի, խորհելով թէ չարձանագրուած անձեր ալ կրնան գտնուիլ, թուրքիոց մէջ ապրող հայերու թիւը կը բարձրացնէ մէկ ու կէս միլիոնի: Թալաթի կը զրէ, թէ ըստ 1915-16 թուականներուն կատարուած մարդահամարին, թուրքիոց մէջ կան 284,157 հայեր: Թալաթի, դարձեալ:

Դիմագիծ իսկական դիմագիծը կ'աշուուած է աշուուած իսկական դիմագիծի համար:

Յունուար 19-ին, «Ակոս» թերթի խմբագրասան առջեւ «Բոլորս Հայ ենք», «Բոլորս Հրանդ ենք» վերտառութիւններ ալ ցուցադրող մի քանի հազարներ Հրանդի միշտիցին:

Երանի թէ փոխան ստորագրութեան մի քիչ փող հաւաքին ու «Ակոս»-ի խմբագրասան առջեւ Հրանդին արձանը դնէին այնպէս, ինչպէս անոր անշնչացած մարմինը ինկած էր մայթին վրայ: Դիմագիծ միան ատեն թուրքը կ'անդրադառնայաց, թէ չարձանագրուած անձեր ալ կրնան գտնուիլ:

Դիմագիծ միան ատեն թուրքը կ'անդրադառնայաց, թէ չարձանագրուած անձեր ալ կրնան գտնուիլ:

«ԼՈՒՍԱԲԱՑ»



ՀԱՅՐՈՒՈՎ

Դարպակերգութիւն 2 արևարով

Հեղինակ՝ ԱԼՅ ԳՈՒՆԻ

Բնմադրիչ՝ ԳՐԻԳՈՐ ՍԱՄԹԱՄԵԱՆ

Վերաբեր ՓԵՏՐՈՒԱՅ 15 - ԿԱՌԱ - ԺՎԱՐ 5.00-ին. \$50

Ժարար, Փետրուայ 7, 21, 28 - Ժամը 8:00-ին

Կիրակի, Փետրուայ 8, 22, - Ժամը 6:00-ին

Ժարար, Մարտ 7, 14 - Ժամը 8:00-ին

Կիրակի, Մարտ 1, 8, 15 - Ժամը 6:00-ին

ՄՈՒՏՏԻ ՆՈՒԷՐ \$20

Հ.Բ.Ը. Մանուկյան Կերպար Մշակութային Համալիր
2495 E. Mountain Street, Pasadena

Տոմանը կարևոր է պատճեան

*Հ.Բ.Ը. Գրաստան 818-243-4112

*Պերճ Գրաստան 818-244-3830

*Հ.Բ.Ը. Մանուկյան-Տեմիրման Վարժարան 818-883-2428

ՊԱՏՐԱՀԱԻ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂՐԵԱՆ

Արաբ (Պաղեստինեան) - իսլամյէլեան տագնապի 60 տարիներու ընթացքին, տեղի ունեցան բազմաթիւ մեծ ու փոքր պատերազմներ, որոնցմէ վերջընթերը եղած էր իսլամյէլ-Հզպալւա (Լիբանան), եւ վերջինը, որ ներկայիս տեղի կ'ունենայ Կազա-Իսլամյէլ պատերազմները: Այս բոլոր ընդհարությունները մարդիկը, եւ ոչ միայն մարդիկը, այլ նաև պետութիւնները կը մղեն կատարելու բարոյական դատողութիւններ անոնց մասին:

Ահաւասիկ կարգ մը դատո-
ղութիւններ:

«Այս՝ իսրայէլ իրաւունք ու-
նի գոյութեան եւ ինքինք պաշտ-
պանելու, սակայն երբ կը ոմքակո-
ծէ սուներ, ճամբաներ, հանրային
ապահովութեան եւ ծառայութեան
միջոցներ, եւ պատճառ կը դառնայ
անմեղ հարիւր-հազարաւոր մար-
դոց մահուան, որոնց մէջ կիներ եւ
երեխաներ, վստահաբար կ'անցնի
համաչափութեան սահմանը իր
սուցած վնասներուն հետ բախ-
տատած»: (Proportion):

«Ի՞նչ ըսել երբ «Հըզպալ-լան» կամ «Համաս»ը իրենց հրթիռ-ներով, շուրջ 12,000 կ'ուզեն մեր երկիրը քանդել: Նկատի առած այս յարձակումները, մեր հակաղարձը մեր կարելիութիւններէն շատ աւելի նուազ է, եւ կը փորձէ կարելի եղածին չափ ինսայել անսմեղներու մահը, եւ պահել համաշափութեան սկզբունքը: Արդարեւ, մեր ենթարկուած վտանգը, եւ մեր քաղաքացիներուն դէմ սպառնալիքը նոյնքան լուրջ են որքան մեր հակադրածը:

Նման առարկութիւններ ներկայիս տեղի կ'ունենան իսրայէլի եւ զայն դատապարտողներու միջեւ, աշխարհի տարած քինս: Առարկութիւններու երկու կողմերն ալ կ'ենթադրեն պատերազմի ընթացքին տեղի ունեցող համաչափութեան սկզբունքը, իբրև ընդունելի գործողութեան մը տարողութիւնը, որ տրամաբանութէն կարելի կը դառնայ իննդրոյ առարկայ դարձնել, ընդունիլ կամ մերժել, եւ կամ կիրարկել իրական կացութիւններու առկայութեան, ինչպէս պարագան է կազա-իսրայէլ աւելի քան 20 օրեր տեւող պատերազմի:

Եթէ հարցին կարելի է մօտենալ փիլիսոփայական առարկութեանց շրջագիծէն ներս, վէճը կամ

թերու ու դէմ կարծիքները կը դառնան ընդունելիի: Պատերազմական բարոյականութեան վերաբերեալ մտածողութիւնը, արեւմտեան շրջանակներու մօս, իր արժատները ունի Ս. Օգոստոսի մտածողութենէն, Քրիստոնէացած սուրբ մը, որ 4րդ դարուն Ք.Ե. կ'ապրէր Հիւսիսային Ավրիլիկի մէջ, եւ մշակած էր «արդար պատերազմի» բարդ տեսութիւնն մը, որ առիթ պիտի տար, 16 դարերու ընթացքին, իր մահէն ետք, շրջանակներու միջեւ երկխօսութեան: (Just Warfare) Օգոստինոսէն ասդին, իր աւանդութեան հետեւողներու մօս, երբ պատերազմի կարելիութիւնը ներկայէ, անպայման նկատի պէտք է առնուի համաչափութեան սկզբունքը (proportionality): Կանուրիշ նկատումներ ալ, ինչպէս յաջողութեան հաւանականութիւնը, եւ կամ պատերազմի ձեռնարկները իբրեւ վերջին ընտրութիւն, երբ բոլոր միւս միջոցները սպառած են: Այս պարագային, համաչափութեան հարցը կը վճռուի պատերազմի պատճառածք քանդումներու դէմ անկի բիսած կամ ձեռք բերուելիք օգուտներուն դիմաց:

Այս բոլորին լոյսին տակ, ըստ
երեւոյթին, իսրայէլ եւ իր ժողո-
վուրդը, իրենք զիրենք հանգիստ
կը զգան Հըզպալլա-իսրայէլ կամ
ներկայիս Համաս-իսրայէլ ընդհա-
րումներու ընթացքին, իրենց կի-
րարկած պատերազմական նախա-
ձեռնութեանց ընթացքին: Իրենք
կ'առարկեն որ այն օգուտը որ
կրնայ ծնիլ Հըզպալլան, կամ Հա-
մասը ջախջախելով, անպայման
արդարանալի է իրենց կատարած
քանդումներուն հետ համեմատե-
լով:

ԱՅԺՄՈՒՄԱԾՈՂՈՒԹԻՒՆԸ
Օգոստինոսեան մտածողութիւնը
թիւնը համաչափութեան վերաբերեալ միայն մասսածք մը կը վերաբերի ժամանակակից պատերազմական ոյժի գործողութեան շուրջ եղած առարկութեանց: Այսօրուաց Օգոստինոսի հետեւորդները ընդհանրապէս կը խօսին այն մասին թէ արդեօք շիտակէ պատերազմի դիմել թէ ոչ: Լատիներէն արտայայտութիւն մը կայ այս մասին, որ հետեւեալն է. «*Ius ad bellum*», այսինքն պատերազմի դիմել կամ չդիմել: 1945էն ի վեր, նոր մտածողութիւնը շեշտը կը դնէ դիւնագիտութեան եւ օրէնքի վրայ, եւ «մարդկապէին իրաւունք-

ներու» շրջագիծէն ներս, նոր պատերազմական բարոյականութեան մը մասին, որ դարձեալ լատիներէն արտայայտութիւն մը ունի - «Jesus in bello», որ բառացիօրէն կը թարգմանուի իբրև «պատերազմի մէջ՝ օրէնքի առկայութիւնը»։ Խնդիրը հետեւեալն է - անգամ մը որ փամփուշտները կ'արձակուին, կամ պատերազմական գործողութիւնները կը սկսին, իբրև հակառակորդ, ի՞նչ միջոցներ կամ զէնքներ իրաւունք ունի գործածելու պատերազմի ընթացքին։ Որքա՞ն զգոյց պարտաւոր ես ըլլալ խնայելու անմեղ քաղաքացիներ - կամ կոռի չժամանակցողներու նկատմամբ, օրինակի համար, պարզ եւ մարդոց մեծամասութեան պարագային։

Այս եւ նման հարցեր են արձանագրուած Ժընեվեան համաձայնագրերու մէջ (Geneva Convention) որոնք, 1949ին ի վեր կը դեկավարեն ազգամիջեան տարակարծութեան ճակատագիրը: Անոնց կցուած են նաեւ նոր յաւելումներ, կցութիւններու քննարկման համար (protocols): Հաշէի միջազգային դատարանը, Մարդկային իրաւանց հսկող միաւորը (Human Rights Watch) եւ նման խումբեր տեսակ մը հակողութիւն (monitoring) կը կատարեն պատերազմներու եւ այլ ձեւի խախտումներու վրայ, որոնք վերցիշեալ լատիներէն արտայացութիւններու լուսին տակ իրեն տեսակի մասները կը յատնեն: Ուրեմն, անոնք որոնք մարդկային իրաւունքներու վերաբերեալ, հակողութիւն կը կատարեն, կը հետեւին ժընեվեի համաձայնագրերու 51րդ յօդուածին վրայ, որ կը դատապարտէ անմեղ քաղաքացիներու կորուստը, համեմատած պատերազմի պատճառած «ծայրահեղ եւ շօշափելի առաւելութեան» հետ: Լիբանանի «Հըզպալլա»ի հետ ընդհարումի ժամանակ, թէեւ Հըզպալլան պետութիւն չէր, իսկ ներկայիս, «Համաս»ի պարագային որ կազմակի օրինաւոր իշխանութիւնը կը հանդիսանայ, 1949ի ժընեվեան համաձայնագրերը կը մնայ ի զօրու: Հասկնալի է անշուշտ որ անմեղներու ցաւերը բախտատած պատերազմական շահի դժուար լուծելի հարց մըն է, յատկապէս կազմակի նման հողամասի մը վրայ, ուր 1.5 միլիոն բնակիչներ խունուած կ'ապրին, եւ բնական կեանքի տուեալները - ճամբար, ելեքտրական կայան, ջուրի կեղրուն, եւայլն, անհրաժեշտ տարրեր են ժողովուրդի կեանքի որակին համար:

Ներկայիս ալ Կազագի դէմ պատերազմական գործողութեանց քննադատները իրենք զիրենք կ'արդարացնեն լատիներէն «*Ius in bello*» սկզբունքին վրայ, որ չեշտը կը դնէ պատերազմի վերաբերեալ անոր օրինականութեան վրայ, այսինքն ինչպէս արդարացնել, կամ օրէնքի առջեւ օրինական նկատել պատերազմի ընթացքին գործածուած մեթոդներն ու զինամթերքը: Կազագի մէջ իսրայէլ հատակօրէն գործածած էր ֆուֆորային ուումբերը, որոնք իրենց քանդումը կը պատճառեն ամենէն զօրաւոր չէնքերուեւ կառուցներու վրայ: Այս իմաստով, ամենեւին ընդունելի չեն նկատուիր իսրայէլի այն առարկութիւնները որ, նոցնիսկ ՄԱԿ-ի կողմէ զեկավարուող հաստատութիւններէն ներս կրնան գոյութիւն ունեցած ըլլալ կազագի «ահարեեկչական» միաւորները: Այլ խօսքով, կարելի չէ որեւէ զինուորական առաւելութիւն նկատել այն վնասը եւ կորուսաները որ կը կատարուին անմեղ ժողովուրդին վրայ: Բացի 1300 պաղեստինեան զոհերէ, որոնց կէսէն աւելի կիներ եւ անչափասաներ, հազարաւոր ընտանիքներ դատապարտուեցան անտունի ըլլալու տիսուր ճակատագրին, լքելով իրենց քանդուած տուները եւ բնակութեան այլ վայրեր: Յստակ չէ ներկայիս թէ ի՞նչ յաղթանակի մասին կրնաց խօսիլ իսրայէլ, երբ անոր վարչապետը կը յատարաբէ թէ «իսրայէլ բաւարարուած է իր նպատակներու ձեռքբերումով»: Օրինակի համար, իսրայէլի գործածած ծանր եւ մեծ ուումբերը իբրեւ թէ ահարեեկիչներ եւ անոնց զեկավարները ապաննելու համար, որքան արդարանալի կը մնան երբ այդ գէնքերու պատճառաւ, մեծ թուով անմեղներու գոհ կ'երթան: Իսրայէլ կը պատճառաբանէ որ պատերազմական շահի դիմաց, կրնան անմեղներ ալ գոհ երթալ:

իբրեւ եղրակացութիւն, փի-
լիստիաները կը խորհին թէ պատե-
րազմի բարոյականութեան վերա-
բերեալ վէճը կը մնայ հիմնուած
երկու հին հարցումներու վրայ -
պատերազմի երթալու իրաւուն-
քին, եւ այդ պատերազմի ընթաց-
քին գործածուած ձիջոցներու եւ
գէնքերու վրայ: Այս երկուքը այս
օրերուն դժուար զանազանելի կը
թուին: Սակայն, ինչ որ ալ ըլլան
առարկութիւնները, երբեք արդա-
րանալի չի կրնար ըլլալ հետեւեալ
մտածումը:

«Այս պատերազմը մենք չենք

Digitized by srujanika@gmail.com



Life, Health, Group Health Disability, Long Term Care



ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՆԻՌԱԺԵՏԾՏ Է

ԵՐԵՎԱՆ ՈՒՆ ԶԵ ՎԵՐԱԲԵՆԵԼՈՒ
ԶԵՐ ԱՊԱԽՈՎԱԳՈՂԻԹԻՒՆԵՐԸ

ՊԵՏՐՈՍ ԵՒ ՍԻԱՎԱՆԻ ՄԱՐԴՈՒՄ

818 **500-9585** ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91201

E-mail: BMaronian@AOL.com

ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"



ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

«ՍԱՐԱԿ-ՄԵՍՐՈՊ» ՎԱՐԺԱՐԱՍԻ «ՔՆԱՐ ՀԱՅՐԵՆԻ» ԵՐԵԿՈՆ



Յունուար 9ին երեկոյեան, Փաստինայի Առաջին Նազովիքի եկեղեցու շքեղ սրահը լեցուած էր շուրջ 700 արուեստակիրներով, որոնք եկած էին վայելելու հայ մշակութին նուրիրուած գեղեցիկ յայտագիր մը՝ «Քնար Հայաստանի» խորագրով։ Խերկաները յուսախաբչչնացին։

Երեկոն սկսաւ օրուան հանդիսավար Անահիտ Մարտիրոսեանի ողջոնի խօսքերով։ Բարձր զնաւատելով նման երեկոյ մը կազմակերպելու վարժարանի այս նախաձեռնութիւնը՝ ան յուս յայտնեց, որ այս քայլը իբրեւ օրինակ կը ծառայէ նաեւ այլ միութիւններու եւ կազմակերպութիւններու։ Նախ բեմ բարձրացաւ սիրուած երգիչ Յարութ Փամպուքեան, որուն «Երեւանի գիշերներում», «Ամար աղջիկ», «Մովսէ էր շառաչում», եւ ի մասնաւորի «Հայուաչքեր» երգերը, մեծապէս խանդակառեցին ներկաները։

Ապա բեմը տրամադրուեցաւ «Արահետ» պարախումբին։ Հայ պարը նոր ալիւնով եւ իւրովի ոճով ներկայացուցին մեր պարման-պարմանուհիները, համոզելով բոլորը, թէ հայ պարը կայ ու կը մնայ։ Պարին յաջորդեց տհոլ-տուտուկի աշխոյթ եղանակներ՝ տաղանդաւոր պատանիներ Պետրոս Տարաքչեան եւ Դափիթ Բոգարեանի կատարմամբ։

Աշխոյթ մթնոլորտը առաւել եւս թափ ստացաւ, երբ բեմ բարձրացաւ երգչուհի Անի Քրիսթի, որ վերջերս ժամանած է Միացեալ Նահանգներ։ Ան իր «Հայրենիք» եւ «Տաք անձրեւ» երգերով հիացուց բոլորը, նաեւ համոզելով, թէ ան երկար տարիներ կրնայ մնալ երգարուեստի բնագաւառի բարձրունքին վրայ։

«Արահետ» պարախումբը շարունակեց իր երթը, եւս հայկական գեղեցիկ պարով մը։

Յայտագրի առաջին բաժինի աւարտին բեմ բարձրացան գաղութիս երիտասարդ ուժեր՝ «Էլէ-

ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԱՐԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ ԱՐԵՒՏԵԱՆ ԹԵՄ ՆՈՐ ՊԱՇՏՈՆՆԵՐՈՒՆԾԱՆԿՈՒՄՆԵՐ

Թեմակալ Առաջնորդ՝ Գեղշ. Տ.
Յովնան Արք. Տէրտիկեան պաշտօն-
ներու հետեւեալ նոր նշանակումնե-
րը կատարեց։

Հոգէ. Տ. Պարետ Մ. Վրդ.
Երէցեան Առաջնորդանիստ Մայր
Տաճարի կառուցման աշխատանք-
ներու կապակցութեամբ՝ Առաջնորդ
Մրբազան Հօր օգնականը նշանակ-
ուեցաւ։ Հայր Սուրբը պիտի մաս-
նակցի Հանգանակիչ եւ Շինութեան
Յանձնախումբերու ժողովներուն,
պիտի զբաղուի Մայր Տաճարի կա-
հաւորմամբ եւ պիտի կատարէ նաեւ
ա'յլ պարտականութիւններ, որոնք
իրեն կը յանձնուին Մրբազան Հօր
կողմէ։ Հոգէնորհ Հայր Սուրբը իր
նոր պաշտօնը պիտի առանձնէ Մարտ
1ին, 2009։

Արք. Տ. Նարեկ Աւագ Քհն. Մատարեան Հոգեւոր Հովիւր նշա-
նակուեցաւ Նորթ Հալիկուտի նորա-
հաստատ Մուխին, որպէս օգնական
ունենալով Արք. Տ. Աւետիս Քհն. Աբովեանը։

Արք. Տ. Ներսէս Քհն. Հայրա-
պետեան Հոգեւոր Հովիւր նշանակ-
ուեցաւ Սանթա Գլարիթացի Հայց.
Առաքելական Եկեղեցուու եւ Հնիթիլով
Վէլի Հայց. Առաքելական Եկեղեցուու։

Արք. Տ. Տիրան Քհն. Աւագ-
եան Հոգեւոր Հովիւր նշանակուեցաւ
Լա Վըրնի Հայց. Առաքելական Եկե-
ղեցուու։

Բրշ. Յովնան Արք. Վարդան-
եան Պըրպէնքի Մուխի Հոգեւոր
Հովիւր Օգնական նշանակուեցաւ։

Ճած «Զախ Յարութը», իր դասա-
կան քանի մը երգերով եւ ապա՝
Հայաստանի քայլեր գովով։
Նուազախումբէն մասնաւոր լիշա-
տակութեան արժանի է վարժարանի
ծնողներէն Արայիկ Դարաքչեանը,
որ երեկոյին կազմակերպման իր
մասնակցութիւնը բերած էր։
Վարժարանի Հոգաբարձութեան
ատենապետ Արա Ասիլեան երախ-
տագիտական ջերմ իսօսքերու լուսայլ
գնահատականներու ուղղեց կամաւոր
եւ սիրայօժար մասնակից բոլոր
արուեստագիտներուն, երեկոն ծրագ-
րող-կազմակերպիչներուն ու վար-
ժարանը միշտ քաջալերող ներկա-
ներկաները։

Արամ Դաւիթեանի շնորհակա-
լութեան աղօթքով երեկոն հասաւ
իր աւարտին, ապա մօտակայ փոքր
սրահին մէջ տեղի ունեցաւ ճոխ

Բրշ. Ռապմիկ Սրկ. Մարգիս-
եան Լա Գանիատա - Քրէսէնթա
Հովիւր Հոգեւոր Հովիւր Օգնական
նշանակուեցաւ։

Բրշ. Մարթին Սրկ. Զաքար-
եան Օգլընտի Ս. Վարդան Հայց.
Եկեղեցու Մատարար Հովիւր նշա-
նակուեցաւ։

Բրշ. Գոյժ Սրկ. Խաչիկեան
Հալիկուտի Ս. Յովհաննու կարա-
պետ Հայց. Եկեղեցուու Հոգեւոր Հովիւր
Օգնական նշանակուեցաւ։

Հոգէ. Տ. Պարետ Մ. Վրդ.
Երէցեան եւ Արք. Տ. Աւետիս Քհն.
Աբովեան փոխադարձաբար պիտի
ծառայեն որպէս Ալեքեր Եկեղեցա-
կաններ փոքր Ծուխերու։

ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՃՈՂՈՎ

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՄԷՋ

Շաբաթ, Յունուար 17ի
առաւօտեան, Առաջնորդարանի մէջ
Մրբազան Հօր նախագահութեամբ
եւ Ատենապետութեամբ իրաւաբան
ծողէֆ կանիմեանի, Թեմական
Խորհուրդը գումարեց իր հերթա-
կան ժողովը, որ ընթացաւ ըստ
պատրաստուած օրակարգի։ Ներ-
կայացուեցան տեղեկագիրներ եւ
նախապատրաստական աշխատանք-
ներ յառաջիկա Թեմական Պատգա-
մատրական ժողովի գումարման
կապակցութեամբ։ Յատուկ անդրա-
դարձ կատարուեցաւ Առաջնոր-
դանիստ Մայր Տաճարի կառուցման
աշխատանքներուն։

Հիւրափիրութիւն, որուն ընթացքին
ներկաները առիթ ունեցան կիսելու
իրենց տպաւորութիւնները։

«Քնար Հայրենիք»ն առիթ հան-
դիսացաւ վայելելու թէ՝ յայտնի եւ
թէ նորայատ արուեստագետներու
գեղեցիկ կատարումները։ Բոլոր ներ-
կանները անդամ մը եւս կրցան մօտէն
շփուկ եւ գնահատել հայ արուեստը,
անդամ մը եւս համոզուելով, որ հայ
երգն ու պարը, հայ մշակոյիթը
ընդհանրապէս, էական ու անհրա-
ժեշտ են ազգապահպանման սուրբ
գործին մէջ։ «Մահակ Մեսրոպ»
վարժարանը իր քրիստոնէական
դաստիարակութեան առընթեր, միշտ
եղած է ու կը մնայ Հայոց լեզուի ու
պատմութեան ուստուցման, հայ մշա-
կոյիթ տարածման համար տքնա-
ջան աշխատանք տանող հաստատու-
թիւն մը։

Արամ Դաւիթեանի շնորհակա-
լութեան աղօթքով երեկոն հասաւ
իր աւարտին, ապա մօտակայ փոքր
սրահին մէջ տեղի ունեցաւ ճոխ

ԼՈՍ ԱՆԵԼՈՍԻ «ՍԻՓԱՆ» ԵՐԳՉԱԽՈՒՄԲԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 30 ՏԱՐԻՆ

Այս տարի լրանում է Լոս Անձելոսի «Սիփան» երգչախմբի
հիմնադրութեան 30 տարին։ Յոբելինական համերգ-երեկոյին
պատրաստուելու համար, երգչախմբի հիմնադիր, գեղարուեստական
դեկավար Հենրիկ ԱՆԱՍԵԱՆԸ հրաւիրում է երգչախմբի բոլոր հին եւ
նոր անդամներին առաջին փորձին, Յունուար 26ին, երեկոյին ժամը
8ին, մասնակույի բնակարանում։

Մանրամասնութիւնների համար հեռաձայնել՝ (323) 466-3726,
(323) 660-7152, (626) 797-9788։

**STUT'R
ԵՐԵ**
**BANKRUPTCY-Ի
ՕՐԵՆՔՆԵՐԸ
Կ'ՕԳՆԵՆ ՁԵԶԻ,
ԶԱՆԳԱՐԱՐԵ**

JANSEZIAN LAW FIRM, PC

If you're facing overwhelming debts, bankruptcy
laws may eliminate all your debts permanently!

225 South Lake Avenue, Third Floor, Pasadena, California 91101

Call Now for a FREE Consultation: **626-432-7209**



Nazareth V. Jansezian, Esq.

massis Weekly

Volume 29, No. 01

Saturday, JANUARY 24, 2009

Barack Obama Sworn In As U.S. President, Calls For ‘Unity Of Purpose’



Barack Obama takes the Oath of Office as the 44th President of the United States

WASHINGTON, DC -- Barack Obama, sworn in on January 20 as the 44th president of the United States, urged his fellow Americans to cast aside their political and social divisions and instead face the challenges of economic chaos, two difficult wars, and a growing environmental crisis with what he called a “unity of purpose.”

Obama was sworn in on the steps of the U.S. Capitol, with a crowd estimated at more than 1 million people gathered on the National Mall and an estimated 1 billion others watching on television around the globe.

Making history as the first African-American to become president, Obama took the oath of office with his hand on a Bible used by President Abraham Lincoln, also a former U.S. lawmaker from Illinois, at his first inauguration in 1861.

The excitement surrounding Obama’s inauguration reached a fever pitch in the nation’s capital, as hundreds of thousands came to participate in the celebrations. Even the weather cooperated. Though it was cold, the sun shone brightly on a day that was supposed to

have been cloudy.

Obama’s speech opened on a note that was far from sunny. With former President George W. Bush sitting nearby, he reminded his fellow citizens that their country faces enormous challenges.

“That we are in the midst of crisis is now well understood,” Obama said. “Our nation is at war, against a far-reaching network of violence and hatred. Our economy is badly weakened, a consequence of greed and irresponsibility on the part of some, but also our collective failure to make hard choices and prepare the nation for a new age.

“Homes have been lost; jobs shed; businesses shuttered. Our health care is too costly; our schools fail too many; and each day brings further evidence that the ways we use energy strengthen our adversaries and threaten our planet.”

He called for a “new era of responsibility,” and said the time has come for the United States to “renew its spirit” and reaffirm “the promise of this nation.”

Obama said the challenges the United States faces “are real, they are serious and they are many. They will not be met easily or in a short span of time.

Turkey Warns U.S. Over Armenian Genocide Recognition

ANKARA -- Turkey’s foreign minister has warned Barack Obama’s incoming administration that any U.S. recognition of Armenian massacres by Ottoman Turks as genocide could derail reconciliation efforts between the two neighbors.

“It would not be very rational for a third country to take a position on this issue... A wrong step by the United States will harm the process,” the Anatolia news agency quoted Ali Babacan as saying last Friday.

Turkey has “never been closer” to normalizing ties with Armenia, its eastern neighbor, and a breakthrough could be secured in 2009, the minister said.

Obama has pledged to his Armenian-American supporters during his election campaign to recognize the World War I killings as genocide. Washington has traditionally condemned the

massacres, but has so far refrained from terming them genocide due to concern about straining relations with Turkey.

Babacan said the dispute was among the issues that Ankara and Yerevan had been discussing since reconciliation efforts gathered steam in September when Turkish President Abdullah Gul paid a landmark visit to Armenia. “Turkey and Armenia have never been closer to a plan on normalizing relations,” Anatolia quoted Babacan as saying.

The fence-mending process, he said, was boosted by similar reconciliation efforts between Armenia and Azerbaijan, a close ally of Turkey. “The prospect of normalizing relations both between Azerbaijan and Armenia and between Turkey and Armenia in 2009 is not a dream,” he added.

But know this, America — they will be met.”

He said he would address the country’s economic challenges without delay.

“Our capacity remains undiminished,” he said. “But our time of standing pat, of protecting narrow interests and putting off unpleasant decisions — that time has surely passed. Starting today, we must pick ourselves up, dust ourselves off, and begin again the work of remaking America.”

Obama made reference to the historic nature of his assent to the presidency, noting that “a man whose father less than 60 years ago might not have been served at a local restaurant can now stand before you to take a most sacred oath.”

He praised “that noble idea, passed on from generation to generation: the God-given promise that all are equal, all are free, and all deserve a chance to pursue their full measure of happiness.”

Turning to international relations, he said, “To the Muslim world, we seek a new way forward, based on mutual interest and mutual respect. To those leaders around the globe who seek to sow conflict or blame their society’s ills on the West, know that your people will judge you on what you can build, not what you destroy.”

Armenian Council of America Congratulates President Obama

WASHINGTON, DC -- The Armenian Council of America congratulates President Barack Obama on his inauguration as the 44th President of the United States and Joseph Biden as Vice-President.

Today marks a momentous period in American history and the Armenian-American community is looking forward to working with the new Administration. As Senators, both Obama and Biden have demonstrated their support on issues of concern to the Armenian-American community.

Barack Obama reaffirmed his support for a strong “U.S.-Armenia relationship that advances our common security and strengthens Armenian democracy”. He is also in favor of “promoting Armenian security by seeking an end to the Turkish and Azerbaijani blockades, and by working for a lasting and durable settlement of the Nagorno Karabagh conflict that is agreeable to all parties, and based upon America’s founding commitment to the principles of democracy and self determination.”

In his over 30 years of public service, Joseph Biden has been a strong and steadfast supporter of the Armenian community. As Chairman of the Senate Foreign Relations Committee, Biden was a co-sponsor of the Arme-

Obama said the country’s foreign-policy challenges go far beyond the wars in Iraq and Afghanistan. He pointed to the almost ubiquitous threat of terrorism and the economic threats of some countries — which he didn’t identify — who have growing economies and appear to be antagonistic, if not hostile, toward the United States.

The president promised terrorists that they can’t break the American spirit, and that “we will defeat you.”

He promised an orderly military withdrawal from Iraq, and an eventual peace in Afghanistan. And he promised partnership with traditional U.S. allies to reduce nuclear arms and reverse global climate change.

After taking the solemn oath of office on the steps of the U.S. Capitol, the new president and first lady smiled, waved, and danced their way through a long afternoon and evening of celebrations. After lunch, they took part in the inaugural parade, thrilling the crowd as they walked part of the distance from the Capitol to the White House. They then watched the rest of the parade from the reviewing stand with their daughters, Sasha and Malia. Over the course of the night, they attended 10 different inaugural balls. It seemed everyone attending the first ball had a camera out as Beyoncé sang and the Obamas danced to the Etta James classic song, “At Last.”

nian Genocide Resolution, and authored the Hrant Dink Resolution calling for the repeal of Article 301 of the Turkish Penal Code that punishes discussion of the Armenian Genocide.

The Armenian Council of America endorsed the Obama-Biden ticket. “The Armenian-American community congratulates our friends and supporters President Obama and Vice-President Biden”, said Armenian Council of America Chairman Vasken Khodanian. “The Obama message of change and hope has resonated around the world. We seek to foster a deeper and stronger relationship with the Obama Administration in a pursuing a new era and vision both here in the United States and in Armenia.”

The Armenian Council of America is a grassroots organization dedicated to work with all political leaders, offering Armenian related news, analysis and resources for policymakers, media, students and activists, advocating issues important to Armenian Americans. The Armenian Council of America aims to strengthen U.S. - Armenia and U.S. - Nagorno Karabakh ties, the development of programs promoting sustainable economic growth and good governance in Armenia, while promoting the values and responsibilities of global citizenship.

Amnesty International:

Still No Justice For Murdered Turkish-Armenian Journalist Hrant Dink

On the second anniversary of the murder of journalist and human rights defender Hrant Dink, the Turkish authorities are still nowhere near bringing to justice those responsible.

Hrant Dink, a Turkish citizen of Armenian decent, was killed on 19 January 2007. The editor of the Agos newspaper and contributor to the influential daily Zaman, he was shot outside the Agos offices in Istanbul.

He was best known for his willingness to debate openly and critically issues of Armenian identity and official versions of history in Turkey relating to the massacres of Armenians in 1915. A passionate defender of human rights, he appeared on different platforms with activists, journalists and intellectuals across the political spectrum. Prior to his death, he was repeatedly prosecuted for expressing his non-violent opinions.

"Hrant Dink was murdered for the expression of his non-violent opinions, apparently with the tacit agreement of elements within the Turkish law enforcement agencies," said Nicola Duckworth, Europe and Central Asia Programme Director at Amnesty International.

Twenty suspects accused of planning and carrying out the murder have been brought to trial. One of those on trial in connection with his death had also acted as a police informer and had repeatedly told police of the plan to assassinate Hrant Dink in the months leading up to his death.

In a separate investigation, eight members of the Gendarmerie face charges of "dereliction of duty" after failing to act on warnings that Hrant Dink was being targeted for assassination.

Police Break Up Opposition Protest in Yerevan

YEREVAN -- Riot police used force on Friday to disperse more than 200 opposition supporters outside a court in Yerevan where seven prominent opposition members stood trial on controversial coup charges.

Court hearings in the trial were adjourned just minutes after their start for the sixth consecutive time because of the defendants' continuing refusal to stand up and show respect for Mnatsakan Martirosian, the judge in the high-profile case. Martirosian again deemed their defiant stance a "disrespectful attitude to the court." He scheduled the next court session for January 30.

Moments later the people that gathered outside the court building in a show of solidarity with the defendants tried to march to the Office of the Prosecutor-General located in the city center. Dozens of riot police blocked their way, saying the protest was not sanctioned by municipal authorities and is interfering with street traffic.

Scuffles and arguments between protesters and the police followed.



